Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ հայոց ի Հայրենիս և ի Սփյուռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ Հայաստանի Անկախության Օրվա առիթով և բերում ամենքիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Միասնական կամքով մեր ժողովուրդն ընտրեց Հայաստանի անկախությունը՝ ազատ ապրելու ու արարելու իր իրավունքն ու դարավոր ձգտումը: Երկրաշարժի ավերների ու վշտերի, շրջափակման ու արցախյան ազատամարտի դժվարությունների մեջ չընկրկեց ու չերկնչեց հայության հոգին՝ հաղթանակներ կերտելով ազգային մեր պետականության կայացման, վերափոխումների ու ձեռքբերումների ճանապարհին:

Այսօր զոհության և փառաբանության աղոթքը Մեր շուրթերին՝ հայցում ենք, որ Բարերարն Աստված զորացնի առ Հայրենին մեր սերը, ու այդ սիրով լուսավորված՝ կյանքի կոչվեն հայրենաշեն մեր գործերը, որ ազատ մեր Հայրենիքը շարունակի նորոգվել շինությամբ, լցվել հույսերով համայն մեր ժողովրդի, և ազատության մեջ ծնված մեր սերունդները միշտ կարևորեն Անկախության Օրվա խորհուրդը՝ իբրև ամենամեծ ձեռքբերում:

Թող Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն ու պահպանի ազգս հայոց և Հայրենի երկիրը մեր. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբերի 2004 թ.